Ծրագիրը ֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Իրավաբանների հայկական ասոցիացիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ «Սոցիալական տեխնոլոգիաների կենտրոն» ՀԿ

«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ԶԵԿՈՒՅՑ «ԻՐԱՎԱԿԱՆ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ 2012-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ»

«ՀՀ իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրի հանրային վերահսկողություն և մոնիթորինգ» ծրագիրը իրականացրել է «Սոցիալական տեխնոլոգիաների կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության հետ համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 505,000 ՀՀ դրամ: Ծրագրի տևողությունն է՝ 2016 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2016թ. նոյեմբերի 30-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և համաֆինանսավորվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից:

ք. Երևան

Նոյեմբեր, 2016թ.

Զեկույցը պատրաստվել է հաշվետվությունների պատրաստման, ինչպես պետական (միջպետական), այնպես էլ ոչ կառավարական իրավապաշտպան ինստիտուտների համընդհանուր միջազգային փորձի հիման վրա:

Ծրագրի ղեկավար՝ Գեղամ Գրիգորյան

Ծրագրի մասնագետ՝ Ազնիվ Կարապետյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Մոնիթորինգի նպատակը 3

2. Մոնիթորինգի նկարագիրը----------

3. Դատական իշխանություն----------

4. Դատախազության համակարգ----------

5. Քրեական արդարադատություն և պատիժներ----------

6. Արբիտրաժ, նոտարական և հանրային ռեգիստրներ, իրավական համաուսցում, փաստաբանական պալատ ----------

7. Ամփոփում----------

8. Եզրակացություն և հետևություններ----------

Մոնիթորինգի նպատակը

2012 թվականի հունիսի 30-ին ՀՀ նախագահի հրամանագրով հաստատվել է Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը:

Ծրագրի նպատակը ըստ պաշտոնական մեկնաբանության պետք է հանդիսանար Հայաստանի Հանրապետությունում ժամանակակից իրավական պետության չափանիշներին համապատասխանող իրավական և դատական համակարգի ապահովումը, որը ենթադրում է մասնավորապես՝

1) անկախ և հաշվետու դատական իշխանության ապահովում,
2) քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացում,
3) վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացումը,
4) քաղաքացիական արդարադատության արդյունավետության բարձրացումը,
5) դատավարական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացումը,
6) փաստաբանական համակարգի բարեփոխումների ապահովումը,
7) դատախազության գործունեության արդյունավետության բարձրացում,
8) հանրությանը մատուցվող ծառայությունների արդյունավետության բարձրացում:

Վերը նշված նպատակների իրականացման համար Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրով /այսուհետ՝ Ծրագիր/ նախատեսվել է իրականացնել մոտ 130 միջոցառում:

Դրանք ներառում են՝

- օրենսդրական բարեփոխումներ, օրենքների, օրենսգրքերի փոփոխություններ,

Ընթացակարգային փոփոխություններ՝

- ուսումնական պրոցեսների փոփոխություններ,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրում՝ փաստաթղթաշրջանառության ոլորտում:

Մոնիթորինգի նպատակն է պարզել թե 2012-2016թթ. ընթացքում պետական միջոցներից լուրջ ծախսեր կատարելով, արդյոք Ծրագրով նախատեսված միջոցառումները կատարվել են՝

1. Սահմանված ժամկետներում.

2. Եթե թույլ են տրվել շեղումներ, ապա ի՞նչն է հանդիսացել դրանց պատճառը և կան համապատասխան պարզաբանումներ.
3. 2012-2016թթ իրականացված Ծրագրից որքանո՞վ է տեղեկացված հանրությունը.
4. Որքանո՞վ է բարելավվել արդարադատություն իրականացնող մարմինների գործունեության արդյունավետությունը, հանրությունը զգո՞ւմ է այն պրակտիկ կյանքում, տեսանելի են արդյո՞ք հասարակության կյանքում օրենսդրական և ընթացակարգային փոփոխությունների արդյունքները:

Մոնիթորինգի նկարագիրը

Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը ըստ ոլորտների՝ պայմանականորեն կարելի բաժանել 9 բաժինների՝

- Դատական իշխանության ոլորտ,
- Քրեական օրենսդրության ոլորտ,
- Վարչական օրենսդրության ոլորտ,
- Քաղաքացիական օրենսդրության ոլորտ,
- Փաստաբանական համայնք,
- Դատախազության համակարգ,
- Հանրային ծառայությունների՝ մասնավորապես արբիտրաժային, նոտարական և հանրային ռեգիստրների համակարգեր,
- Կրթական ոլորտ՝ մասնավորապես՝ հասարակության մեջ իրավական դաստիարակություն ձևավորելու ուղղությամբ:

Մոնիթորինգի ընթացում ուսումնասիրվել են Ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումների կատարման ընթացքը, շեղումները, հետաձգումները, ակնկալվող արդյունքների վերաբերյալ անցկացվել է նաև հանրային կարծիքի դիտարկում, հարցումներ են ուղարկվել ՀՀ արդարադատության նախարարություն, ՀՀ դատական դեպարտամենտ, ՀՀ դատախազություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ փաստաբանների պալատ, ուսումնասիրվել է Ծրագրի վերաբերյա Համացանցում առկա տեղեկատվությունը:

Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ Համացանցում Ծրագրի իրականացման վերաբերյալ առկա է չափազանց սուղ տեղեկատվություն, որը վերաբերվում է Ծրագրով նախատեսված բազում գործողություններից մեկ-երկուսին՝ օրինակ պրոբացիոն ծառայության ներդրման խնդիրներին, մյուս գործողությունների և միջոցառումների վերաբերյալ բացակայում է որևէ համապարփակ տեղեկատվություն, թե ի՞նչ ընթացքում են գտնվում Ծրագրով նախատեսված գործողությունները, շեղումներ և հետաձգումներ թո՞ւյլ տրվել են, թե՞ ոչ: Եթե այո, ապա ի՞նչ հիմքերով, ի՞նչ արդյունքներ են տվել իրականացված միջոցառումները:

Մոնիթորինգի վերլուծական մասում հիմնական շեշտադրումը կատարվել է դատական իշխանության, դատական և քրեական օրենսդրության ոլորտներում նախատեսված և իրականացված միջոցառումների ընթացքի, ակնկալվող արդյունքների ձեռքբերումների և բացթողումների վրա, քանի որ Ծրագրի նպատակ-խնդիրների ոլորտային միջոցառումների բացարձակ մեծամասնությունը ուղղված է դատական իշխանության ոլորտի արդյունավետության ապահովմանը, դատավարական և քրեական օրենսդրության բարեփոխումներին, և կազմում են Ծրագրի հիմնական առանցքը, և բացարձակ գերակշռում են մյուս ոլորտներում նախատեսվող միջոցառումներին միասին վերցրած:

Հանրային կարծիքի ուսումնասիրության ընթացքում պատահական ընտրությամբ հարցումներ են արվել ավելի քան 50 քաղաքացիների, որոնց բացարձակ մեծամասնությունը ընդհանրապես տեղյակ չի Ծրագրի մասին, շատերը ուղղակի իրենց կարծիքն են հայտնել ընդամենը դատական համակարգի հետ կապված, դժգոհելով որ օրենսդրական փոփոխությունների մասին ոչ ոք չի իրազեկում, օրինակ **քաղաքացին /34 տարեկան, ք. Երևան, վարսահարդար/** հայտնում է, որ եղել է, որ առնչվել է դատական համակարգի հետ, բայց ծանոթ չի ոչ նախկին, ոչ էլ ներկա օրենքներին, որովհետև օրենսդրական փոփոխությունների մասին ոչ ոք քաղաքացիներին չի տեղեկացնում: **Մեկ այլ քաղաքացի /63 տարեկան, ք. Երևան մանկավարժ/** հայտնում է, որ հազվադեպ, բայց առնչվում է դատական համակարգի հետ, փոփոխությունների մասին միայն լսում ենք, գործնականում դրանք նկատելի չեն: **Հաջորդ քաղաքացին /Երևան, 58 տարեկան, ինժեներ/** հայտնում է, որ չի առնչվում դատական համակարգի հետ, իսկ փոփոխությունների մասին լսելով գիտի, այն էլ՝ ոչ դրական բաներ, օրինակ, դժգոհում են, որ համակարգում ցածր աշխատավարձ են ստանում, բարձր են միայն դատավորների աշխատավարձերը: **Հարցմանը մասնակցած մյուս քաղաքացին /Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, բուժաշխատող, 45 տարեկան**/ հայտնում է, որ դատական համակարգի հետ առնչություն չի ունեցել, հուսով է, որ չի էլ ունենա, փոփոխությունների մասին տեղեկանում են լրատվամիջոցների միջոցով, Ազգային ժողովի նիստերին մասամբ հետևելով, նկատելի է, որ փոփոխությունները հիմնականում դրական են: **Մեկ այլ քաղաքացի / Կոտայքի մարզ, գ. Գառնի/** հայտնում է, որ ոչ մի առնչություն չի ունեցել դատական համակարգի հետ, դատական և որևէ այլ համակարգի փոփոխություններին սովորական քաղաքացիները ծանոթ չեն, ինչպե՞ս ծանոթանան:

1. Դատական համակարգ

Ծրագրով նախատեսված այն նպատակ-խնդիրները, որոնք վերաբերվում են դատական համակարգին և իր մեջ ներառում են քրեական, վարչական և քաղաքացիական արդարադատության արդյունավետությանն ուղղված միջոցառումներ, պայմանականորեն ներառվել են Դատական համակարգ գլխում և ներկայացված են ըստ Ծրագրի միջոցառումների ցանկի հավելվածի՝

1. **«Արդար, արդյունավետ և հանրության առջև հաշվետու դատական իշխանության ապահովմանն ուղղված միջոցառումներ»** վերնագրված թիվ 1 ենթաբաժին՝ ներառում է թվով 12 նպատակ-խնդիր, որոնց իրականացման համար նախատեսվել է իրականացնել ընդհանուր 41 գործողություն:

2. **«Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ»** վերնագրված թիվ 3 ենթաբաժին՝ ներառում է թվով 6 նպատակ-խնդիր, որոնց իրականացման համար նախատեսվել է իրականացնել ընդհանուր 8 գործողություն:

3. **«Քաղաքացիական արդարադատության և քաղաքացիական օրենսդրության կատարելագործմանն ուղղված միջոցառումներ»** վերնագրված թիվ 4 ենթաբաժին՝ ներառում է թվով 5 նպատակ-խնդիր, որոնց իրականացման համար նախատեսվել է իրականացնել ընդհանուր 5 գործողություն:

4. **«Դատավարական գործառույթների իրականացման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ»** վերնագրված թիվ 5 ենթաբաժին՝ ներառում է թվով 13 նպատակ-խնդիր, որոնց իրականացման համար նախատեսվել է իրականացնել ընդհանուր 21 գործողություն:

Արդար և հանրության առջև հաշվետու դատական իշխանություն

Ենթաբաժինը ներառում է թվով 12 նպատակ-խնդիր, որոնց իրականացման համար նախատեսվել է իրականացնել ընդհանուր 41 գործողություն: Նախատեսված 41 գործողությունից սահմանված ժամկետում կատարվել են 23-ը, 17 գործողություններ կատարվել են որոշակի շեղումներով, 1 գործողության կատարումը ժամանակին հետաձգվել է՝ պայմանավորված սահմանադրական փոփոխություններով և հարցի կարգավորումը տրվել է սահմանադրության նախագծով: Խոսքը վերաբերվում է առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահների պաշտոնավարման ժամկետի

սահմանափակման նպատակահարմարությանը: Այս հարցի կարգավորումները սահմանված Սահմանադրության 166-րդ հոդվածով:

Շեղումներով իրականացված գործողությունների ժամանակացույցը տատանվում է սահմանված ժամկետից մի քանի ամսից մինչև մեկ տարի ուշացումներով:

Ժամկետում կատարված միջոցառումները վերաբերվում են՝

- դատավորների և դատական ծառայողների վերապատրաստման կարգերի կատարելագործում,
- էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի ներդրման,
- փաստաթղթեր թվայնացման, դատավորների գնահատման կարգի,
- դատավորների միջև գործերի ծրագրային բաշխման գործողություններին,
- արդարադատության ակադեմիայի հիմնադրման և գործունեության կարգը հաստատելու մասին օրենքին,
- բնակչության թվին և դատավորների ծանրաբեռնվածության վերաբերյալ ուսումնասիրությունների անցկացման և ըստ այդմ համապատասխան առաջարկությունների ներկայացման,
- դատավորների էթիկայի հանձնաժողովի թափանցիկության ապահովման,
- դատարաններում տեղեկատվական և հաղորդակցային տեխնոլոգիաների բարելավման,
- դատական իշխանության ֆինանսավորման առավել արդյունավետ մոդելի ներդրման:

Շեղումներով իրականացված միջոցառումները հիմնականում վերաբերվել են՝

- դատավորների թեկնածությունների ցուցակում ընդգրկվելու համար որակավորման ստուգման կարգի կատարելագործման,
- դատավորների ինքնակառավարման առավել արդյունավետ մոդելի ներդրման,
- դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու օբյեկտիվության և հրապարակայնության երաշխավորման,
- դատական իշխանության կողմից իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման համակարգի ներդրում:

Միջոցառումների իրականացման պատասխանատուն գլխավորապես ՀՀ արդարադատության նախարարությունը, որոշ նպատակ-խնդիրներում՝ նաև ՀՀ դատական դեպարտամենտը:

Վարչական արդարադատության և վարչական վարույթի արդյունավետության բարձրացում

Ենթաբաժինը ներառում է թվով 6 նպատակ-խնդիր, որոնց իրականացման համար նախատեսվել է իրականացնել ընդհանուր 8 գործողություն: Նախատեսված 8 գործողությունից սահմանված ժամկետում կատարվել են 7-ը, 1 գործողություն կատարվել է սահմանված ժամկետից մեկ տարի ուշացումներով:

Ժամկետում կատարված միջոցառումները վերաբերվում են՝

- վարչական դատարանների ծանրաբեռնվածության նվազեցմանն ուղղված լուծումներ գտնելուն,
- վարչական վարույթի օրենսդրական բարեփոխումներին:

Շեղումներով իրականացվել է՝

- վարչական ակտի հասցեատիրոջ կողմից այդ դրույթների վիճարկման օրենսդրական հնարավորությանը:

Ծրագրի ժամանակացույցով գործողության վերջնաժամկետ է սահմանվել 2012թ. դեկտեմբերը, գործողությունը կատարվել է 2013թ. հուլիսի 15-ին, համապատասխան նախագիծը ներկայացվել է Ազգային Ժողով, և 05.12.2013թ. Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում փոփոխություն, որով ապահովվել է վարչական ակտի հասցեատիրոջ կողմից այդ ակտի դրույթները վիճարկելու հնարավորություն:

Միջոցառումների իրականացման պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարությունն է:

Քաղաքացիական արդարադատություն և քաղաքացիական օրենսդրության կատարելագործում

Ենթաբաժինը ներառում է թվով 5 նպատակ-խնդիր, որոնց իրականացման համար նախատեսվել է իրականացնել ընդհանուր 5 գործողություն: Բոլոր գործողությունները վերաբերվում են քաղաքացիական դատավարության և քաղաքացիական օրենսգրքերում փոփոխություններ և լրացումներ կատարելուն, որոնցից մեկ գործողությամբ նախատեսված փոփոխությունները Ազգային Ժողովի կողմից ընդունվել են սահմանված ժամկետում, իսկ մյուս 4 գործողություններով նախատեսվող փոփոխությունները ընդգրկվել են ՀՀ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի նախագծում, որը ներկայացվել է ՀՀ կառավարություն:

Միջոցառումների իրականացման պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարությունն է:

Դատավարական գործողությունների արդյունավետության բարձրացում

Ենթաբաժինը ներառում է թվով 13 նպատակ-խնդիր, որոնց իրականացման համար նախատեսվել է իրականացնել ընդհանուր 21 գործողություն, որոնցից 10-ը կատարվել է ժամկետում, 7-ը՝ շեղումով՝ սահմանված ժամկետից մինչև մեկ տարի ուշացումով, 4-ի կատարումը հետաձգվել է, դրանց լուծումները ներառվել են Քրեական դատավարության և քրեական օրենսգրքերի, քրեակատարողական օրենքի նախագծերում:

Միջոցառումների իրականացման պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարությունն է:

2. Դատախազության գործունեության արդյունավետության բարձրացում

2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող մի շարք միջոցառումների (7.1.1--7.9.1 կետեր) կատարման համար որպես պատասխանատու մարմին (ՀՀ արդարադատության նախարարության հետ համատեղ)՝ նախատեսված է ՀՀ գլխավոր դատախազությունը: Ի պատասխան մեր հարցման, Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքի վերաբերյալ ՀՀ դատախազությունը հայտնել են հետևյալը.

Վերոհիշյալ միջոցառումներից՝ այն է՝ դատախազի օգնականի ինստիտուտը ներդնելու նպատակահարմարության և դատախազության աշխատակազմում պետական ծառայության իրավական կարգավորման նախագծերը ընդգրկված են ԱԺ 10-րդ նստաշրջանի օրկարգում, իսկ որպես դատախազների անկախության ապահովման երաշխիք դատախազների նշանակման կարգը վերանայման, դատախազների թեկնածուների ցուցակից թեկնածուներին հանելու հստակ չափանիշների սահմանման, ինչպես նաև դատախազների ծառայողական առաջխաղացման կարգն ու պայմանները վերանայելու, դատախազների վերադասության և աշխատանքային իրավահարաբերությունները կարգավորող նորմերի, քրեաիրավական ոլորտից դուրս պետական շահերի պաշտպանության բնագավառում դատախազության գործառույթների, դատախազներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համակարգը՝ հստակեցնելու ուղղությամբ «Դատախազության մասին» ՀՀ օրենքում՝ փոփոխություններ կատարելը երկարաձգվել է մինչև 2017 թվականի ապրիլ՝ կապված «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքի ընդունման հետ, որը ներառված է ՀՀ Նախագահի 2016 թվականի փետրվարի 10-ի ՆՀ-170-Ն հրամանագրով հաստատված՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության փոփոխություններով անվանականորեն սահմանված և ընդունման, փոփոխման կամ լրացման ենթակա օրենքների ցանկում: Իսկ դատախազական գործունեության արդյունքների մատչելի հաշվառումն ու վերլուծությունն ապահովող «Դատախազի աշխատանքի մասին» վիճակագրության վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգի և դատախազությունում արխիվից օգտվելու մատչելիությունն ապահովող արխիվի վարման էլեկտրոնային կառավարման համակարգչային համակարգի ներդրումը նախատեսված է երկարաձգել մինչև 2018 թվականի դեկտեմբեր՝ քանի որ այդ միջոցառուները ներառվել են Համաշխարհային

բանկի կողմից ֆինանսավորվող պետական հատվածի արդիականացման 3-րդ ծրագրի մեջ:

Միջոցառումների իրականացման պատասխանատուն ՀՀ դատախազությունն է:

3. Քրեական արդարադատության և քրեական պատիժների համակարգի արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ

Սույն բաժնում ընդգրկված են 4 նպատակ-խնդիր՝

- մշակել նոր քրեական օրենսգիրք,
- մշակել նոր քրեական դատավարության օրենսգիրք,
- ՀՀ արդարադատության նախարարության կառուցվածքում ստեղծել քրեակատարողական ծառայությունից անկախ և առանձին պրոբացիայի ծառայություն,
- բարեփոխել պատժիների կրման հետ կապված խնդիրները:

Սույն նպատակ-խնդիրների ուղղությամբ նախատեսված միջոցառումների կատարման վերաբերյալ առկա է հաշվետվություն, ըստ որի ՀՀ արդարադատության նախարարությունը ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը 2015 թվականի օգոստոսի 6-ին դրել է շրջանառության մեջ, որի շուրջ մինչ օրս ընթանում են քննարկումներ:

ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծը՝ ՀՀ ԱԺ պետական-իրավական հարցերի հանձնաժողովում քննարկումների հիման վրա լրամշակվել է և ուղարկվել ՀՀ Ազգային ժողով: Այժմ ՀՀ ԱԺ գլխադասային պետական-իրավական հարցերի հանձնաժողովի դրական եզրակացությամբ ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագիծն ընդգրկվել է ՀՀ ԱԺ լիագումար նիստերի օրակարգ:

ՀՀ-ում քրեական արդարադատության ոլորտի բարեփոխումների ամբողջականության ապահովման նպատակով ՀՀ արդարադատության նախարարության կողմից նախաձեռնվել է նաև ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի մշակման գործընթաց: Այդ նպատակով ստեղծվել է հանձնաժողով և աշխատանքային խումբ: Հանձնաժողովի շրջանակներում մշակվել է ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի հայեցակարգի նախագիծը և ուղարկվել միջազգային փորձաքննության:

«Հայաստանի Հանրապետությունում պրոբացիոն ծառայության ներդրման» հայեցակարգը 2015 թվականի ապրիլի 30-ին թիվ 19 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել ՀՀ կառավարության կողմից: Պրոբացիոն ծառայության ներդրման աշխատանքները շարունակվում են իրականացվել:

2015 թվականի հունիսի 17-ին մեկնարկել են պրոբացիոն ծառայության փորձարկումները Երևանի Շենգավիթ վարչական շրջանում և Վանաձորում: Փորձարկումները իրականացվում են ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության այլընտրանքային պատիժների կատարման բաժնի հենքի հիման վրա: Փորձարկման շրջանակներում կիրառվելու են նաև էլեկտրոնային հսկողության սարքեր: Իրականացվելու են վերասոցիալականացման ծրագրեր: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի աջակցությամբ կազմակերպել էր վերապատրաստման դասընթացներ քրեակատարողական

ծառայողների, դատավորների և դատախազների համար: Նախագիծը նաև քննարկվել է հասարակական կազմակերպությունների հետ:

2016 թվականի մայիսի 23-ին ՀՀ նախագահը ստորագրել է «Պրոբացիայի մասին» օրենքը, իսկ ՀՀ կառավարությունը մայիսի 26-ին ընդունել է «Պրոբացիայի պետական ծառայության մասին» որոշումը:

Ինչ վերաբերվում է պատժից պայմանական վաղաժամկետ ազատման, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ընթացակարգի բարեփոխմանը, ապա «Որոշակի ժամկետով կամ ցմահ ազատազրկման դատապարտված անձին պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելու կամ պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելու ներկայացման հարցերը պատիժը կատարող հիմնարկի կողմից քննարկելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը մշակվել և ներկայացվել է ՀՀ կառավարություն: Միաժամանակ, նախագիծը լրամշակվել է պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատման հստակ չափանիշներով և կրկին ուղարկվել է շահագրգիռ մարմիններին՝ կարծիքի: Ներկայումս ստացված կարծիքներն ամփոփվում են:

Հարկ է նշել, որ բոլոր նախատեսված միջոցառումները թեև կատարվել են, բայց բոլորը կատարվել են սահմանված ժամանակացույցից զգալի շեղումներով, մեկ տարուց-մինչև 3 տարի ժամկետներով, սակայն պատկան մարմինների կողմից որևէ պարզաբանում, հաշվետվություն, թե ո՞րն է հետաձգումների, շեղումների պատճառը, բացակայում է:

Միջոցառումների իրականացման պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարությունն է:

4. Արբիտրաժ, Նոտարական և հանրային ռեգիստրներ, Իրավական համառուսուցում և դաստիարակություն, Փաստաբանների պալատ

Այս ոլորտներում Ծրագրով սահմանվել է 8 նպատակ խնդիր, որոնց իրականացման համար նախատեսվել է 21 միջոցառում: Հարկ է նշել, որ այս ոլորտներում նախատեսված միջոցառումների գերակշռող մասը կատարվել է սահմանված ժամկետներում, իսկ թույլ տրված շեղումները աննշան են:

Մասնավորապես՝ կարևոր միջոցառումներից են ՄԱԿ-ի Միջազգային առևտրային իրավունքի հանձնաժողովի մոդելային օրենքի պահանջներին համապատասխան «Առևտրային արբիտրաժի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որը ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2015 թվականի հունիսի 19-ին:

2012 թվականի մայիսի 7-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է նախագծերի փաթեթ, որով նախատեսվել է հաշտարարության ինստիտուտի ներդրումը ՀՀ իրավական համակարգում և քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային վեճերը հաշտարարների միջոցով լուծելուն ուղղված իրավակարգավորումները:

Վերոգրյալ փոփոխությունները ուժի մեջ են մտել 2015 թվականի սեպտեմբերի 10-ից: Սրա հետ կապված 2015 թվականի հուլիսի 17-ին ուժի մեջ է մտել

«Հաշտարարության որակավորման հանձնաժողովի ձևավորման, գործունեության կարգը հաստատելու, հաշտարարների որակավորման դասընթացը կազմակերպելու և անցկացնելու, որակավորման վկայագիր տրամադրելու կարգը և ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշումը:

Քաղաքացիական կացության ակտերի գրանցման էլեկտրոնային բազայի թվայնացումը զարգացնելու ուղղությամբ շրջանառության մեջ է դրվել «Քաղաքացիական կացության ակտերի մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որով նախատեսվել է քաղաքացիական կացության ակտերի գրանցման բոլոր տարածքային բաժիններում մեկ պատուհանի սկզբունքով կենտրոնացված ծառայությունների մատուցում:

Միջոցառումների իրականացման պատասխանատուն ՀՀ արդարադատության նախարարությունն է:

«Իրավական համառուսուցման, իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի վերակառուցման հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը 2015 թվականի օգոստոսի 31-ին ՀՀ կառավարության թիվ 40 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել, որի հիման վրա մշակվել է «Իրավական համառուսուցման, իրավական դաստիարակության և իրավաբանական կրթության համակարգի վերակառուցման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագրի» նախագիծը: Նախագիծը դրվել է շրջանառության մեջ: Երկու գործողության կատարման անհրաժեշտություն վերացվել, մեկ գործողության կատարում ֆինանսական միջոցների բացակայության պատճառով հետաձգվել է մինչև 2017թվական:

Միջոցառումների իրականացման պատասխանատուն ՀՀ կրթության և գիտության նախարարությունն է:

5. Ծրագրի վերաբերյալ հանրային իրազեկում

Ծրագրի իրականացման վերաբերյալ առկա է մի քանի տեղեկատվական աղբյուր հանդիսացող պաշտոնական փաստաթուղթ, որոնք տեղադրված են ՀՀ արդարադատության նախարարության կայքէջում՝ որոնք ներկայացվում են ըստ նվազեցման հաջորդականության՝

24/12/2015

Կիսամյակային հաշվետվություն Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների վերաբերյալ:

01/07/2015

Կիսամյակային հաշվետվություն Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրից բխող միջոցառումների վերաբերյալ:

26/01/2015

Հաշվետվություն ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» թիվ ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված ծրագրի 2014 թվականի ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ:

20/01/2015

Հաշվետվություն Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի 2014 թվականի գործունեության վերաբերյալ:

20/01/2015

Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի և գերակա խնդիրների իրականացման արդյունքների մասին հաշվետվության սեղմագիր:

04/02/2014

Հայեցակարգ Հայաստանի Հանրապետությունում պրոբացիայի ծառայության ներդրման վերաբերյալ:

21/03/2013

Հաշվետվություն՝ ՀՀ Նախագահի 2012թ-ի հունիսի 30-ի թիվ ՆԿ-96-Ա կարգարդրությամբ հաստատված միջոցառումների ծրագրից բխող 2012 թվականի ընթացքում մշակված օրինագծերի վերաբերյալ:

15/01/2013

Հաշվետվություն՝ ՀՀ ԱՆ աշխատակազմի 2012 թվականի աշխատանքային գործունեության վերաբերյալ:

Նշված տեղեկատվական աղբյուրների համաձայն, նախատեսված բոլոր միջոցառումները իրականացվել են, ներկայացված են գործողությունների կատարման տարեթվերը և ընդունված իրավական ակտերը: Բացակայում է որևէ վերլուծություն, հիմնավորում, թե ինչո՞ւ Ծրագրով նախատեսված միջոցառումների կատարման վերջնաժամկետների և վերոնշված փաստաթղթերում շատ գործողությունների

իրականացման ժամանակացույցերը չեն համապատասխանում միմյանց, եթե թույլ են տրվել շեղումներ, ապա ի՞նչ պատճառներով, կատարված միջոցառումները ինչ արդյունքներ են տվել, հանրությունը բավարար տեղեկացված է արդյոք փոփոխություններից ու բարեփոխումներից:

Բացի պրոբացիոն ծառայության վերաբերյալ մի քանի հարցազրույցներց, բացակայում է Ծրագրով նախատեսված միջոցառումների վերաբերյալ հարցազրույցներ, մեկնաբանություններ, վերլուծություններ:

Համացանցում գտնվել են ընդամենը մոտ մեկ տասնյակի հասնող հրապարակումներ տարբեր լրատվամիջոցներով, որոնք գլխավորապես Ծրագրի մեկնարկի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություններ են և մեկ-երկու հրապարակում՝ Ծրագրի ընթացքի վերաբերյալ կրկին պաշտոնական հաղորդագրությունների մասին: Բացակայում են Ծրագրի կատարման ընթացքի վերաբերյալ լայն լսարանի համար հետաքրքրություն ներկայացնող հրապարակումներ, որոնք ըստ էության և բովանդակային կներկայացնեին Ծրագրի կատարման ազդեցությունը ըստ ոլորտների, աշխատանքների արդյունավետության բարձրացումը՝ ըստ նախատեսված նպատակ-խնդիրների և այլն:

Ամփոփում

Այսպիսով պարզվում է հետևյալը՝

Ծրագրով 2012-2016թթ ընթացքում նախատեսվել է կատարել ընդհանուր 128 գործողություն, որի կատարման պատասխանատու են եղել ՀՀ արդարադատության նախարարությունը՝ իր ոլորտին առնչվող և ՀՀ դատական դեպարտամենտի, ՀՀ Դատախազության, ՀՀ կրթության և գիտության նախարարության, ՀՀ փաստաբանների պալատի հետ համատեղ բոլոր գործողություններով:

1. *Ծրագրով նախատեսված գործողությունների կատարումը.*



2. *Պատասխանատու մարմիններ*

Արդարադատության նախարարությունը, առանց այլ գերատեսչությունների օժանդակության, պատասխանատու է եղել 79 գործողությունների կատարման համար:



ՀՀ դատախազությունը պատասխանատու է եղել 14 գործողությունների կատարման համար:



ՀՀ դատական դեպարտամենտը պատասխանատու է եղել 24 գործողությունների կատարման համար:



Դատական դեպարտամենտը՝ ի պատասխան մոնիթորինգի աշխատանքային խմբի հարցումների, թե ո՞ր գործողություններն են կատարվել ժամանակին, որո՞նք են կատարվել շեղումներով, որո՞նք չեն կատարվել, որոնք են հետաձգվել, և որոնք են դրանց պատճառները, չի պատասխանել ըստ էության, այլ տվել է միայն ընդհանուր պատասխան, և ըստ այդմ հնարավոր չի եղել մոնիթորինգի շրջանակներում պարզել թե ո՞ր գործողություններն են, որո՞նք չեն կատարվել, և որո՞նք են այդ չկատարման պատճառները:

ՀՀ փաստաբանների պալատը պատասխանատու է եղել 7 գործողությունների կատարման համար, որից կատարվել է բոլոր 7 գործողությունները:



ՀՀ Կրթության և գիտության նախարարությունը պատասխանատու է եղել 4 գործողությունների կատարման համար:


ՀՀ Կրթության և գիտության նախարարություն
1
1
2
կատարվել է
հետաձգվել է
անհրաժեշտությունը վերացել է

Եզրակացություններ և հետևություններ

Այսպիսով, ելնելով զանգվածային լրատվության միջոցներում Ծրագրի, նախատեսված միջոցառումների, դրանց կատարման կամ ընդհանրապես ընթացքի վերաբերյալ չափազանց սուղ տեղեկատվությունից, որը ընդամենը պաշտոնական հաղորդագրությունների տեսքով հաշվետվություններ են, որոնք տեղադրված են միայն ՀՀ արդարադատության նախարարության կայքէջում և ընդամենը բովանդակում է թե Ծրագրի ո՞ր կետի վերաբերյալ համապատասխան օրենքի փոփոխությունը և լրացումը ե՞րբ է կատարվել, կամ հետաձգվե՞լ է, վկայում է այն մասին, որ Ծրագիրը հասարակական հետաքրքրություն և պահանջարկ չի վայելել, ինչն էլ թերևս պայմանավորված է նրանով, որ միջոցառումների էությունը, նպատակները, խնդիրները, դրանք իրականացնելու մեխանիզմները՝ հանրային լայն լսարանի համար չեն մեկնաբանվել, պարզաբանվել, լուսաբանվել, տեսանելի չեն եղել հանրության համար, քանի որ բացի նշված զուտ գերատեսչական մի քանի հաղորդագրություններից, որևէ այլ լայն իրազեկում զանգվածային լրատվության միջոցներով, պարզաբանումներ պատկան և իրավասու մարմինների կողմից ներկայացված չեն: Միջոցառումները նաև հանրային լսարանի համար տեսանելի չեն և հետաքրքրություն չեն ներկայացրել հավանաբար նաև այն պատճառով, որ նախատեսված գործողությունները վերաբերվել են միայն դատավորների և դատական ծառայողների, դատախազության ծառայողների, փաստաբանների մասնագիտական և աշխատանքային իրավահարաբերությունների կարգավորումներին, օրենսգրքերի փոփոխություններին:

Այնուամենայնիվ հանրության համար այդ փոփոխություններից արդարադատության արյունավետության ակնկալվող արդյունք կարելի է համարել նախատեսված միջոցառումներից իրականացված հետևյալ գործողությունները.

1. **Դատավորների միջև գործերի օբյեկտիվ / պատահական/ բաշխման համակարգի ծրագրային՝ ներդրումը, ապահովումը, կատարելագործումը:**

Այս միջոցառումը՝ դատավորների միջև գործերի օբյեկտիվ, պատահական բաշխման համակարգը հաջողված գործիք է և մեծապես նպաստում է կոռուպցիոն մեխանիզմների դեմ պայքարում: Հիշյալ միջոցառումը սահմանված է Ծրագրի 1.8.1 կետով, որի պահանջների կատարման ուղղությամբ 2014 թվականի հունիսի 10-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է դատավորների միջև գործերի բաշխման օբյեկտիվ չափանիշներ: Այն զրկում է դատարանների նախագահներին դատական գործերը մակագրելիս սուբյեկտիվ և այլ գործոններով պայմանավորված աշխատառճից, դատական գործերը իրենց նախընտրելի դատավորներին մակագրելուց,

դատավորների միջև անհավասար աշխատանքային ծանրաբեռնվածություն ստեղծելուց և այլ արատավոր գործելաոճից: Առանձին ուսումնասիրության թեմա է, թե գործնական աշխատանքում արդյո՞ք ներդրված ծրագրային համակարգը ապահովվում է ծանրաբեռնվածության հավասար բաշխում դատավորների միջև, կամ արդյոք իսպառ բացակայում է նախընտրած գործը նախընտրած դատավորին մակագրելու հնարավորությունը: Այս ուսումնասիրությունը կարելի է իրականացնել զուտ պատահական ընտրանքային եղանակով մեկ-երկու մարզային կամ Երևան քաղաքի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանների աշխատանքները ուսումնասիրելով: Ամեն դեպքում այս միջոցառման իրականացումը արդարադատության արդյունավետության բարձրացմանն նպաստող գործիք է:

2. **Բնակչության թվին և դատավորների ծանրաբեռնվածությանը համապատասխան հավասարակշռել դատավորների թվաքանակը:**

Հաջորդ կարևոր հարցը, դա ըստ բնակչության թվին և դատավորների ծանրաբեռնվածության՝ դատավորների թվի հավասարակշռման աշխատանքներն են, որը նախատեսված է Ծրագրի 1.6.1 կետով, որի պահանջների կատարման վերաբերյալ առկա է հաշվետվություն, որ 2015 թվականի նոյեմբերի 25-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով դատավորների տեղեր են ավելացվել Երևան քաղաքի Արաբկիր և Աջափնյակ վարչական շրջաների ընդհանուր իրավասության դատարաններում: Բացի այդ, Ծրագրի 3.1.2 կետով նախատեսված վարչական դատարանի դատավորների թվաքանակն ավելացնելու պահանջների կատարման վերաբերյա առկա է հաշվետվություն, որ 2012 թվականի դեկտեմբերի 19-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով 10-ով ավելացել է վարչական դատավորների թիվը՝ 16-ից դառնալով 26:

Ծրագրով նախատեսված այս միջոցառման իրականացումը իհարկե դրական փաստ է, սակայն ակնհայտ է, որ այսօր ըստ բնակչության թվաքանակի և դատավորների ծանրաբեռնվածության առկա է զգալի անհամաչափություն: Անգամ թռուցիկ անդրադարձը ցույց է տալիս, որ օրինակ քաղաքացիական գործերով քաղաքացու հայցը քննության է դրվում հայցադիմումը ընդունվելուց մի քանի ամիս անց, և եթե առաջին նախապատրաստական նիստին որևէ տեխնիկական կամ այլ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառով նիստը հետաձգվի և բնականաբար՝ ըստ հերթականության կրկին նշանակվելու է մի քանի ամիս անց, ապա կարելի համոզված ասել, որ մեկ տարվա ընթացքում, այսօր, հանրապետության բազմաթիվ վարչական տարածքների և մարզերի ընդհանուր իրավասության դատարաններում քաղաքացիական գործերի քննությունը ընթանում է տարիներով, առաջացնելով քաղաքացիների արդարացի դժգոհությունը, խախտվում է քաղաքացու սահմանադրական և միջազգային հինարար իրավունքի նորմը, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր գործի քննությանը ողջամիտ ժամկետներում: Թե

որքանով է բնակչության թվին և դատավորների ծանրաբեռնվածության՝ դատավորների թվի հավասարակշռման ուղղությամբ Ծրագրով նախատեսված միջոցառումները տվել դրական ադյունք, ապա դրանք առանձին լուրջ ուսումնասիրության թեմա են և կարիք ունեն ավելի մեծ ժամանակով և ծավալով հետազոտության՝ համեմատելով դատարանակազմություն ունեցող երկրների փորձի՝ բնակչության թվին համարժեք մեկ դատավորին բաժին ընկնող դատական գործերի հաշվով դատավորների քանակի և դատավորների ծանրաբեռնվածության ուսումնասիրությունները և հայաստանյան դատարաններում տիրող ծանրաբեռնվածությունը ըստ դիմողների, գործերի, և քննարկվող ժամկետների:

3. **Հաջորդ կարևոր հարցը, որի իրագործումը նույնպես կարող է տեսանելի, շոշոափելի արդյունքներ պարունակել կոռուպցիոն ռիսկերի նվազեցման տեսանկյունից և հանրային հետաքարքրություն ներկայացնել, դատավորների անկախության բարձրացման արդյունավետությանը ուղղված հետևյալ միջոցառումներն են՝**

    1. Կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվածության օրենսդրական երաշխիքների ամրապնդումն է /Ծրագրի 1.4.2 կետ/
    2. Արդարադատության խորհրդի նիստերի դռնբացության խնդիրը /Ծրագրի 1.4.3 կետ/
    3. Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հստակեցումը /Ծրագրի 1.4.4 կետ/

Նշված բոլոր կետերի ուղղությամբ, սահմանված ժամանակացուցից՝ այն է՝ 2013 թվականի սեպտեմբեր-հոկտեմբեր, մինչև մեկ տարի շեղումով՝ 2014 թվականի հունիսի 21-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը որի միջոցով կարգավորվել է կարգապահական վարույթի շրջանակներում դատավորի անկախության և պաշտպանվաշության օրենսդրական երաշխիքները, հստակեցվել են դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերը՝ հնարավորինս բացահայտելով նյութական և դատավարական օրենքների ակնհայտ և կոպիտ խախտումների բովանդակությունը:

Արդարադատության խորհրդի նիստերի դռնբացության հետ կապված հարաբերությունները, որով սահմանվել է, որ արդադատության խորհրդի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ արդարադատության խորհրդի որոշմամբ դրանք անցկացվելու են դռնփակ՝ հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահի նկատառումներից ելնելով:

Իհարկե, այս փոփոխությունների արդյունքները նկատելի կլինեն այն դեպքում, երբ դատավորները առաջին հերթին իրենք կփորձեն օգտվել այդ գործիքակազմից՝ պաշտպանելու համար իրենց իրավունքները, և երկրորդ՝ երբ հանրությունը՝ ի դեմս ԶԼՄ-ների՝ ցանկություն կհայտնի տեղեկանալու վերոնշյալ մարմինների գործողություններից: Սակայն այն հանգամանքը, որ վերոնշյալ գործընթացների վերաբերյալ հանրային լսարանի համար բացակայում է տեղեկատվություն, հետևաբար

հանգում ենք այն համոզման, որ թե դատավորները անձամբ, թե ԶԼՄ-ները, դեռ պատրաստ չեն ամբողջությամբ օգտվելու օրենսդրական այս հնարավորություններից:

4. **Հաջորդ կարևոր հարցը, որի վրա ցանկանում ենք հրավիրել ուշադրություն, դա Ծրագրի 1.9 կետով նախատեսված պահանջների կատարումն է, որը նախատեսում է միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքներով ներդնել դատական իշխանության կողմից իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման համակարգ:**

Սույն կետի պահանջների կատարման վերաբերյալ առկա է հաշվետվություն, որ 2014 թվականի հունիսի 10-ին ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որը սահմանում է դատական իշխանության կողմից իր գործունեության վերաբերյալ հաշվետվությունների հրապարակման համակարգ:

5. **Հաջորդ հաջողված և կոռուպցիոն ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումներից կարելի է համարել Պրոբացիոն Ծառայության ներդրումը, ՔԿԱԳ բաժիններում և ռեգիստրի համակարգերում մեկ պատուհանի ծրագրի ներդրումը:**

Այսպիսով, ամփոփելով Ծրագրի կատարման ընդհանուր մոնիթորինգը, կարելի է արձանագրել, որ նախատեսված նպատակ-խնդիրները կատարվել են, իսկ հետաձգվածները ներառվել են գալիք միջոցառումներում: Սակայն ամենակարևորը, այն է հանրային հետաքրքրությունը Ծրագրի նկատմամբ բացակայում է, որը թերևս պետք է լիներ ուղիղ հակառակը և հանդիսանար Ծրագրի արդյունավետության ու հաջողության կարևոր գրավականը և երաշխիքը: